

ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ԳՀԱՇԶԲ-25/84-1

ք. Երևան

«29» «05» 2025 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷԴԳԱՐ-ՇԻՆ» ՍՊԸ-ն՝ ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Միսոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բակային տարածքների բարեկարգման և հանգստի գոտիների բարեկարգման և կառուցման աշխատանքները (այսուհետև՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է համաձայն հավելված 2-ի:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:



[Handwritten signature]

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ գննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուին իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուին պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուին պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն **730** օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուին պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուին Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուին հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային



ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն պայմանները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուին պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՉԱՏՄԱՆԹՅՈՒՆ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **21 886 800** (քսանմեկ միլիոն ութ հարյուր ութսունվեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուին իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի



Handwritten signature in blue ink.

հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ԼԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է):

ԼԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է:

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ:

ՎԳ -ն ծավալաբեր-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՐՈՒՄ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի **0,15** (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի **10** (տաս) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի **0,5** (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները:

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարել	Տուգանք - Պայմանագրային գնի 0,5% չափով
2	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահապանելը	Տուգանք - Պայմանագրային գնի 0,5% չափով
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահապանելը	Տուգանք - Պայմանագրային գնի 0,5% չափով

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶՂԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)



Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուի ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և որանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք



բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջի զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02593108

Վ. Պապիկյան

(ստորագրություն)

Կ.Տ.



ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԷԴԳԱՐ-ՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
Զուլաքար, 6-րդ փող. տուն 7
«Արարատ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1510053896640100
ՀՎՀՀ 08425035

Ա. Միմոնյան

(ստորագրություն)

Կ.Տ.



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

2/2	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չ/Մ	ընդհանուր գինը	կատարման	
					հասցեն	ժամկետը
1	45611300/95	Պետք է իրականացվեն Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Զ.Սարկավազի 121/1 շենքի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ՝ համաձայն կից ներկայացվող նախագծա-նախահաշվային փաստաթղթերի և ծավալաթերթի: ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. Աշխատանքներն իրականացնել շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, 2. Ապահովել շինարարության ժամանակ օգտագործվող շինարարական նյութերի որակը հաստատող փաստաթղթերի /սերտիֆիկատներ, տեխնիկական անձնագրեր, լաբորատոր ստուգման և փորձարկման մասին հաշվետվություններ և այլն/ և դրանց համապատասխանությունը ստանդարտներին, տեխնիկական ու այլ նորմատիվային պահանջներին: <i>Աշխատանքների ավարտից հետո Կապալառու կազմակերպությունը կրում է 2 տարվա երաշխիքային պարտավորություն:</i>	դրամ	16202400	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան	Պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքները սկսվում են՝ տեխնիկական հսկողության ծառայություններ մատուցման պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 90-րդ օրացուցային օրը ներառյալ



4	45611300/102	Պետք է իրականացվեն Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Պարոնյան պուրակի բարեկարգման և կառուցման աշխատանքներ՝ համաձայն կից ներկայացվող նախագծա-նախահաշվային փաստաթղթերի և ծավալաթերթի: ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. Աշխատանքներն իրականացնել շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, 2. Ապահովել շինարարության ժամանակ օգտագործվող շինարարական նյութերի որակը հաստատող փաստաթղթերի /սերտիֆիկատներ, տեխնիկական անձնագրեր, լաբորատոր ստուգման և փորձարկման մասին հաշվետվություններ և այլն/ և դրանց համապատասխանությունը ստանդարտներին, տեխնիկական ու այլ նորմատիվային պահանջներին: <i>Աշխատանքների ավարտից հետո Կապալառու կազմակերպությունը կրում է 2 տարվա երաշխիքային պարտավորություն:</i>	դրամ	5684400	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան Պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքները սկսվում են՝ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 90-րդ օրացուցային օրը ներառյալ
---	--------------	---	------	---------	--

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՉԱՓԱԲԱԺԻՆ 1. ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՆԱՔԵՐ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ Զ. ՍԱՐԿԱՎԱԳԻ 121/1 ՇԵՆՔԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հ/Հ	Աշխատանքների անվանումը Название работ	Չափման միավորը Единица измерения	Ծավալը Объем	Միավորի արժեքը Цена единицы	Ընդհանուր արժեքը Всего
				հազ. դրամ тыс. Драм	հազ. դրամ тыс. Драм
1	2	3	4	5	6
	Քանդման աշխատանքներ Демонтажные работы				
1	Նստարանների ապամոնտաժում Демонтаж скамеек	հատ шт	2	2.36	4.73
2	Ասֆալտբետոնե շերտի քանդում/86քմ/ Снос асфальтобетонного покрытия /86 кв.м/	մ³ м³	8.70	5.80	50.44
3	Հանքաձյուղով տոգորված խճային ծածկույթների քանդում/86քմ/ Снос асфальтобетонных щебневых покрытий /86 кв.м/	մ³ м³	20.90	0.97	20.28
4	Մետաղական շինությունների և նմանվող տարաքների ապամոնտաժում Демонтаж металлических зданий и аналогичных конструкций	տ т	0.40	86.14	34.46
5	Բետոնե և բազալտե եզրաքարերի ապամոնտաժում /բետոնե հիմքով/	զմ мм	148.0	1.38	204.44

	Դեմոնտաժ ԲԵՏՈՆԱԿԱՆ և ԲԱԶԱԼՏՈՎԱԿԱՆ ԲՈՐԴՅՈՐՆԱԿԱՆԻ /Տ ԲԵՏՈՆԱԿԱՆ ՕՍՈՒՆԱՅԻՄ/				
6	Ծառերի արմատահատում /համաձայնեցնել պատվիրատուի հետ/ Выкорчевка деревьев /по согласованию с заказчиком/	հատ шт	8.0	0.91	7.29
7	Մետաղական ցանկապատի ապամոնտաժում Демонтаж металлического забора	զմ пм	148.00	0.73	108.76
8	Բետոնե հիմքերի և հարթակների քանդում Снос бетонных фундаментов и площадок	մ ³ м ³	3.85	24.10	92.77
9	Մետաղական մակերևույթների մաքրում յուղաներկից և ժանգից Очистка металлических поверхностей от масляной краски и ржавчины	մ ² м ²	39.0	0.50	19.59
10	Բետոնյա պատերի քանդում Снос бетонных стен	մ ³ м ³	2.16	27.99	60.47
11	Գրունտի մշակում մեխանիզմով/հողի շերտի հանությամբ, ինքնաթափ մեքենաների վրա բարձելով Обработка почвы механизированным способом (выемка пласта почвы), погрузка в самосвалы	մ ³ м ³	184.50	0.89	164.67
12	Գրունտի մշակում ձեռքով Ручная обработка почвы	մ ³ м ³	18.74	3.45	64.72
13	Գրունտի տեղափոխում 13կմ Перевозка грунта 13км	տ т	221.40	3.68	814.43
14	Շին. աղբի հավաքում, բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 13կմ Сбор строительного мусора, погрузка на самосвалы и вывоз на расстояние 13 км.	տ т	110.15	4.93	543.51
	ԸՆԴԱՄԵՆՆՆՆԻ ՄԱՅԱԼ ԲԱԺՆՈՎ Итого по разделу				2190.55
	Կշիռ (%) Процент (%)				11.32%
	Կառուցողական աշխատանքներ Строительные работы				
	Բազալտե եզրաքարերի տեղադրում 150*300մմ /առանց ծակոտկեն/ Монтаж базальтовых бордюрных камней размером 150х300 мм - с бетонным основанием /без пор/				
1	Խճի մախապատրաստական շերտի իրականացում 7սմ հաստությամբ Выполнение подготовительного слоя из гравия толщиной 7 см.	մ ³ м ³	3.100	10.86	33.66
2	Բազալտե եզրաքարերի տեղադրում 150*300մմ /առանց ծակոտկեն/ Монтаж базальтовых бордюров размером 150х300мм	զմ пм	178.0	12.02	2138.85
	ԸՆԴԱՄԵՆՆՆԻ ՄԱՅԱԼ ԲԱԺՆՈՎ Итого по разделу				2172.51
	Կշիռ (%) Процент (%)				11.23%
	Բազալտե եզրաքարերի տեղադրում 200x100 մմ չափերով-քետոնե հիմքով/առանց ծակոտկեն/ Монтаж базальтовых бордюров размером 200х100мм				
1	Խճի մախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ Выполнение подготовительного слоя из гравия толщиной 5 см.	մ ³ м ³	1.52	10.86	16.50
2	Բազալտե եզրաքարերի տեղադրում 200x100մմ չափերի Монтаж базальтовых бордюров размером 200х100мм	զմ пм	152	9.11	1384.35
	ԸՆԴԱՄԵՆՆՆԻ ՄԱՅԱԼ ԲԱԺՆՈՎ Итого по разделу				1400.85
	Կշիռ (%) Процент (%)				7.24%
	Ասֆալտբետոնյա աշխատանքներ Асфальтобетонные работы				
1	Խճային հիմք H=12սմ Гравийное основание H=12см	մ ² м ²	174	1.49	259.04
2	Բիտումի լցում խճի վրա 174 մ ² (4.12տ/1000մ ²) Битумная заливка на щебень 174 м ² (4,12т/1000м ²)	տ т	0.71700	258.92	185.64
3	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 5սմ հաստությամբ Устройство покрытия из зернистого асфальтобетона толщиной 5 см.	մ ² м ²	174	4.98	866.26
	ԸՆԴԱՄԵՆՆՆԻ ՄԱՅԱԼ ԲԱԺՆՈՎ Итого по разделу				1310.94
	Կշիռ (%) Процент (%)				6.78%
	Ասֆալտբետոնյա աշխատանքներ մալթ Укладка слоя гравия толщиной 7 см.				
1	7 սմ հաստությամբ խճե շերտի իրականացում Укладка слоя гравия толщиной 7 см.	մ ² м ²	52.0	1.19	61.81
2	Ավազակալային խառնուրդից պրոֆիլի ուղղում Корректировка профиля из песчано-гравийной смеси	մ ² м ²	52.0	0.65	34.02
3	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 3սմ հաստությամբ Устройство покрытия из зернистого асфальтобетона толщиной 3 см.	մ ² м ²	52	3.13	162.87
	ԸՆԴԱՄԵՆՆՆԻ ՄԱՅԱԼ ԲԱԺՆՈՎ Итого по разделу				258.69
	Կշիռ (%) Процент (%)				1.34%



Handwritten signature and date.

	Բետոնե սալիկների (տոմետ) տեղադրում-գունավոր-/Старый город/-արտաքին մեկերևույթը ջնարակապատված Монтаж бетонной плитки (томет) - цветной - /Старый Город/ - внешняя поверхность глазурованная				
1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 7սմ հաստությամբ Выполнение подготовительного слоя из гравия толщиной 7 см.	մ ³ м ³	5.740	10.86	62.33
2	Հարթեցնող շերտ բետոնե սալերի տակ 10սմ հաստությ.չոր ց/ա շաղախով Выравнивающий слой под бетонные плиты толщиной 10 см с сухим цементным раствором	մ ³ м ³	8.20	21.28	174.48
3	Սալիկապատում բետոնե սալիկներով 4սմ հաստությամբ-/Старый город/ արտաքին մեկերևույթը ջնարակապատված Облицовка бетонной плиткой Толщина 4 см - /Старый город/ внешняя поверхность глазурованная	մ ² м ²	82.0	5.60	459.20
	Ընդամենը տվյալ բաժնով Итого по разделу				696.01
	Կշիռ (%) Процент (%)				3.60%
	Այլ աշխատանքներ Другие работы				
1	Նոր փայտյա նստարանների ձեռք բերում և տեղադրում Покупка и установка новых деревянных скамеек	հատ шт	16	85.82	1373.15
2	Նոր մետաղյա աղբամանների ձեռք բերում և տեղադրում Закупка и установка новых металлических мусорных баков	հատ шт	9	27.21	244.90
3	Մետաղական մակերևույթների յուղաներկում երկու շերտ Два слоя масляной покраски на металлических поверхностях	մ ² м ²	32.00	1.69	54.20
4	Բետոնե աստիճանների և հարթակի կառուցում B15 դասի բետոնից Строительство бетонных лестниц и площадок из бетона класса B15	մ ³ м ³	2.10	62.62	131.50
5	Պատերի բետոնյա շերտի վերականգնում B15 դասի բետոնով Восстановление бетонного слоя стен бетоном класса B15	մ ³ м ³	1.680	57.98	97.41
6	Աստիճանների և հարթակի երեսպատում բազալտե սալերով, 30մմ հաստ./առանց ծակոտկեն/, եզրագծի մեկ կողմից աղեղային հղկումով Облицовка лестниц и площадок базальтовыми плитами толщиной 30 мм /непористыми/, с дуговой шлифовкой с одной стороны кромки	մ ² м ²	21.00	15.60	327.60
7	Աստիճանների դիմային մասերի երեսպատում բազալտե սալերով, 30մմ հաստ./առանց ծակոտկեն/ Облицовка фасадных частей лестниц базальтовыми плитами толщиной 30 мм /непористыми/	մ ² м ²	4.82	30.48	146.91
8	Կողապատերի երեսպատում բազալտե սալերով 30մմ հաստ./առանց ծակոտկեն/ Облицовка боковых стен базальтовыми плитами толщиной 30 мм/непористыми/	մ ² м ²	22.8	32.05	730.66
9	Բազալտե վրադիր քարերի տեղադրում 30մմ b=450մմ/առանց ծակոտկեն/ Монтаж базальтовой брусчатки 30мм b=450мм/без пор/	մ ² м ²	3.60	42.85	154.27
10	Մետաղական ճաղաշարի իրականացում Установка металлических ограждений	գմ пм	136.0	13.23	1799.55
11	Մետաղական բազրիքի իրականացում Установка металлических перил	գմ пм	9.4	8.11	76.23
12	Պատերի սվաղի իրականացում ցեմենտավազային շաղախով 1:3 հարաբերությամբ /ցանցով/ Оштукатуривание стен цементным раствором в соотношении 1:3 /с сеткой/	մ ² м ²	36.00	2.92	105.07
13	Պատերի ներկում ֆասադային ներկով /երանգը համաձայնեցնել պատվիրատուի հետ/ Покраска стен фасадной краской /цвет согласовываем с заказчиком/	մ ² м ²	36.00	2.56	92.00
14	Բուսահողի փռում ձեռքով կանաչ տարածքներում /10սմ հաստ./ Распределение верхнего слоя почвы вручную на зеленых участках /толщиной 10 см/	մ ² м ²	680	2.53	1721.39
15	Նախապատրաստում սերմի ցանելու համար Подготовка к посеву семян	մ ² м ²	680	0.28	192.13
16	Սերմի ցանում 1մ ² - 25գր Норма высева семян на 1м2 - 25г	մ ² м ²	680	0.17	113.97
17	Գունավոր տեսախցիկ արտաքին տեղադրման մոնտաժման կոմպլեկտով /արևային մարտկոցով Full HD, 24/7, անլար ինտերնետ կապով/-տեղադիրքը ճշտել պատվիրատուի հետ Цветная камера с монтажным комплектом для наружной установки /солнечная батарея Full HD, 24/7, беспроводное подключение к интернету/ - оговаривается с заказчиком	հատ шт	4	8.12	32.50
18	Տեսահսկող սարք տեսագրիչով (24ժամ տեսագրում)-տեղադիրքը ճշտել պատվիրատուի հետ Видеонаблюдение с видеорегистратором (круглосуточная запись) - местонахождение уточните у клиента	հատ шт	1	59.12	59.12
	Ընդամենը տվյալ բաժնով Итого по разделу				7452.57
	Կշիռ (%) Процент (%)				38.53%
	Ցայտադրուրի պատրաստման, տեղադրման աշխատանքներ				
1	Ցայտադրուրի տեղի բետոնացում B15 դասի բետոնով Бетонирование участка фантана бетоном класса B15	մ ³ м ³	0.80	56.03	44.82



Handwritten signature in blue ink.

2	Հարթալի երեսպատում բազալտե սալերով, 30մմ հաստ., /առանց ծակոտկոն/	մ ² մ ²	4.0	15.60	62.40
3	Ցայտարդյունի պատրաստում և տեղադրում մշակված բազալտե քարից	հատ շտ	1	224.34	224.34
4	Ամրան Φ14A500с Арматура Φ14A500с	տ т	0.00136	359.21	0.49
5	Պող. քիթեղ 200x200x2մմ Лист стальной 200x200x2мм	մ ² մ ²	0.04	9.65	0.39
6	Ցինկապատ բասակ Φ200մմ, h=100մմ Ведро оцинкованное Φ200мм, h=100мм	հատ շտ	1	23.46	23.46
7	Ցայտիչի տեղադրում Φ15մմ Установка насадки Φ15мм	հատ շտ	2	12.46	24.92
8	Ավազի նախապատրաստական և պաշտպանիչ շերտերի իրականացում Выполнение подготовительного и защитного слоев песка	մ ³ մ ³	8.93	6.02	53.76
9	Հավաքովի ե/ք դիտահորի կառուցում Строительство сборного стального люка	մ ³ մ ³	0.14	77.66	10.87
10	Բետոնե նախապատրաստական շերտ Подготовительный слой бетона	մ ³ մ ³	0.12	42.66	5.12
11	Թեթև խիճ Легкий гравий	մ ³ մ ³	1.30	11.20	14.55
12	Մետաղական դռնակ Металлическая дверь	տ т	0.015	474.67	7.12
13	Ռետին Резина	զմ мм	3.0	1.25	3.74
14	Ծխնի петля	հատ շտ	2	0.81	1.61
15	Փական Замок	հատ շտ	1	3.81	3.81
16	Ջերմամեկուսիչ սալ (երկտալր 30x3 L=400մմ-2հատ, 30x3 L=590մմ -4 հատ պլաստմաս, 30x 3 L=490մմ 8հատ պլաստմաս, խարխալ-4հատ, փրփրապլաստ h=100մմ -1հատ, հեղուկ L=140մմ, Φ 8-6հատ) Теплоизоляционная плита (двухслойная 30x3 L=400мм-2шт, 30x3 L=590мм -4шт пластик, 30x3 L=490мм 8шт пластик, анкер-4шт, пенопласт h=100мм -1шт, пенопласт L=140мм, П 8-6шт)	կոմպ комп	1	46.92	46.92
17	Ջերմամեկուսիչ նյութ Теплоизоляционный материал	զմ мм	1.5	0.91	1.37
18	Շին. սիլիկոն Строительный силикон	հատ շտ	1	1.76	1.76
19	Մետաղական դռնակի յուղաներկում Картина маслом металлической двери	մ ² մ ²	3.00	0.88	2.63
20	Պոլիպրոպիլենային լայնակավոր խողովակների մոնտաժում de63 (կոյուղու) Монтаж полипропиленовых широких труб de63 (канализация)	զմ мм	17.5	1.36	23.82
21	Պոլիպրոպիլենային եռակցվող խողովակների մոնտաժում de15, PN=1.0ՄՊա (խմելու ջրի) Монтаж полипропиленовых сварных труб de15, PN=1,0МПа (питьевая вода)	զմ мм	60.0	0.90	53.95
22	Պլաստմասե պատյան խողովակ DN32 Пластиковая обсадная труба DN32	զմ мм	24.0	1.67	40.10
23	Մետաղե գնդային փական DN15 Кран шаровой металлический DN15	հատ շտ	1	5.94	5.94
24	Պոլիէթիլեն (PE) de15 խողովակների վազում, ախտահանում Промывка и дезинфекция полиэтиленовых (ПЭ) труб de15	կմ км	0.1015	101.17	10.27
Ընդամենը տվյալ բաժնով Итого по разделу					668.16
Կշիռ (%) Процент (%)					3.45%
Լուսավորության դեկորատիվ հենասյուներ 4մ Декоративные осветительные столбы 4м					
1	Գրունտի մշակում մեխանիզմով, կողալիցքով Обработка почвы механизмом, боковая засыпка	մ ³ մ ³	22.03	0.50	11.06
2	Բնահողի մշակում /խրամուղում/, ձեռքով Обработка почвы /рытье траншей/, вручную	մ ³ մ ³	0.45	6.09	2.71
3	Անկողմակի պատրաստում Подготовка постели	զմ мм	77.00	0.36	28.09
4	Ավազ /ստորին և վերին պաշտպանիչ շերտ 20սմ հաստ./ Песок /нижний и верхний защитный слой толщиной 20 см/	մ ³ մ ³	8.50	6.02	51.14
5	Խողովակ վինիլպլաստ Ø50մմ Виниловая труба 50мм	զմ мм	77.00	0.76	58.19
6	ABBG 2x10մմ ² հատվածքով մալուխի անցկացում /ստորգետնյա/ Прокладка кабеля ABBG 2x10мм2 /под землей/	զմ мм	77.00	0.41	31.86
7	Պաշտպանիչ /զգուշացնող/ ժապավենի տեղադրում 300մմ լայնքով Монтаж защитной /предупреждающей/ ленты шириной 300мм	զմ мм	77.00	0.44	33.87



Handwritten signature

8	Գրունտի ետլիցք մեխանիզմով С механизмом обратной засыпки грунта	մ ³ м ³	12.58	0.08	1.04
9	Գրունտի տոփանում трамбовка грунта	մ ³ м ³	1.26	0.34	0.42
10	Բնահողի ետլիցք ձեռքով, տոփանումով Засыпка естественного грунта вручную, трамбовкой	մ ³ м ³	1.40	1.76	2.47
11	Ավելորդ բնահողի եւ շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում 13կմ Избыток природных земель и застройки. Погрузка мусора в самосвалы и его транспортировка на расстояние 13 км.	տ т	12.91	4.93	63.70
12	Լուսավորության դեկորատիվ հենասյուների տեղադրում Монтаж декоративных столбов освещения	հատ шт	6	133.67	802.00
13	Բաժանիչ տուփ /մետաղական/ 200*200 /տեղադրվող կորոշվի շինարարական աշխատանքների ընթացքում/ Распределительная коробка /металлическая/ 200*200 /местоположение будет определено в ходе строительных работ/	հատ шт	1	9.95	9.95
14	Ավտոմատ անջատիչ 40Ա Автоматический выключатель 40А	հատ шт	1	3.59	3.59
15	Ավտոմատ անջատիչ 25Ա Автоматический выключатель 25А	հատ шт	1	3.59	3.59
16	Առկա լուսավորության հենասյուների վրա լրացուցիչ բարձակների տեղադրում Ф40x3մմ, L=1.2մ պողպատե խողովակներից	հատ шт	2	1.68	3.36
17	Առկա լուսավորության հենասյուների վրա լուսադիոդային LED 50W,4200K լուսատուների տեղադրում կամ համարժեք/փոխարինելով հին լուսատուները/	հատ шт	2	27.19	54.39
18	Հենասյուների ներկում հակակոռոզիոն ներկով 2 շերտ Покраска столбов 2 слоями антикоррозийной краски	մ ² м ²	4.2	0.40	1.69
Ընդամենը տվյալ բաժնով Итого по разделу					1163.13
Կշիռ (%) Процент (%)					6.01%
Ոռոգում Орошение					
Հողային աշխատանքներ Земляные работы					
1	IV կարգի գրունտի մշակում էքսկավատորով, ինքնաթափ մեքենաների վրա բարձելով Разработка грунта IV категории экскаватором, погрузка в самосвалы	մ ³ м ³	19.5	1.20	23.47
2	III կարգի գրունտի մշակում ձեռքով Обработка почвы III класса вручную	մ ³ м ³	4.05	3.45	13.99
3	Ավազի մախապատրաստական շերտ 10սմ հաստ. Слой песчаной подготовки толщиной 10 см.	մ ³ м ³	7.50	36.69	275.16
